11.11.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ներքոշարադրյալ փաստերը.

- «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ կարիքների համար հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/19» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ «Ընթացակարգ») շրջանակներում ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ն:

- Ընթացակարգի բացման և գնահատման նիստի N2 արձանագրության (առ 10.05.2024թ.) 4.1 կետով արձանագրվել է այն փաստը, որ «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ կից «Շտկումներ» վերտառությամբ փաստաթղթով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

«**3-րդ** չափաբաժնի մասով հրավերով պահանջվել է ներկայացնել Интерсен плюс արտադրության կամ համարժեք Гигиена Мед արտադրության ապրանք, իսկ մասնակցի կողմից ներկայացվել է այլ ապրանքային նշան ունեցող ապրանք:»

- Առաջնորդվելով Ընթացակարգի հրավերի 8.9 կետով և ՀՀ կառավարության 22.05.2017թ.-ի N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 41-րդ կետով մասնակցին առաջարկվել է ծանուցման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

- Ինչպես հավաստվում է Ընթացակարգի բացման և գնահատման նիստի N2 արձանագրության (առ 10.05.2024թ.) 4.4 կետով «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով, այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովման վճարման պարտականության բացակայության պայմաններում «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, մասնավորապես՝ սահմանված ժամկետում չի կատարել հայտում հայտնաբերված անհամապատասխանությունների շտկում:

Ղեկավարվելով

- Կարգի 41-րդ կետով, համաձայն որի՝

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են

անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

- Կարգի 19-րդ կետով, համաձայն որի՝

«Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

- Հրավերի 8.14 կետով, համաձայն որի՝

*«Ընդ որում, եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (**այդ թվում շտկման ենթակա**) կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովում կամ եթե ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորմանը համապատասխան և դրա արդյունքում համաձայնագիր կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը սահմանված ժամկետում միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (այսուհետ նաև տուժանք) ձևով ներկայացված պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը չի փոխարինում բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում (...)»:*

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, համաձայն որի՝

«Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

ՈՐՈՇԵՑԻ

1. «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:

2. «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Ստորև ներկայացվում է «Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ-ի տվյալները՝ համաձայն սահմանված ձևաչափի:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համար անիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Պապիկյան առողջապահական արտադրանք» ՓԲԸ	02695183	Երևան, Հյուսիսային պողոտա, 8 շ., Բն. 22	v			ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-24/19

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԱՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ